

**Հայկազեան Հայագիտական Հանդեսի LԴ.
Հատորին Շնորհանդէսը եւ
Հայկազեան Համալսարանի Կազմակերպած Հայ
Տպագրութեան 500ամեակի Հանդիսութիւններու
Գիրք-Ալպոմին Ներկայացումը Պէյրուսի Մէջ**

Հայկազեան Հայագիտական Հանդեսի, 34րդ հատորին շնորհանդէսը տեղի ունեցաւ, Չորեքշաբթի, 23 Յուլիս 2014ին, Համալսարանի հանդիսասրահին, ներկայութեամբ Համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսթեանին, Հայաստանի Հանրապետութեան Դեսպանատան Ա. քարտուղար Վարդան Ադամեանին, Հանդէսի պատասխանատու խմբագիր Հայր Անդրանիկ Ծ. Վ. Կոստանեանին, Հայաստանի Նորավանք Գիտակրթական Հիմնադրամի փոխ-տնօրէն Դոկտ. Արթուր Դումանեանին, Նոյն հիմնադրամի հոգաբարձական խորհուրդի անդամ Դոկտ. Մուշեղ Լալայեանին եւ լիբանանահայ մտաւորականներու:

Հայկազեան Հայագիտական Հանդէսի պատասխանատու քարտուղար Դոկտ. Անդրանիկ Տազեսեան կատարեց բացման խօսքը: Ան նշեց թէ վերջին քսանամեակին, նորագոյն արհեստագիտութեան յորժանուտը վերածնաւորեց համաշխարհայնացման ալիքներուն շարժումակութիւնը, որուն ի հետեւանք, յառաջացան համաշխարհային այնպիսի բացառիկ փոփոխութիւններ, որոնք դիմակայելու համար մարդկութեան ստեղծած նախկին յենակէտերը սկսած են խախտիլ: Հայկական կեանքն ալ, այս բազմակշռոյթ յարաշարժութեան մթնոլորտին մէջ պէտք է խարսխուի հայկական քաղաքացիական գաղափարախօսութեամբ ջրդեղուած հայկական կառոյցներու եւ որոշումներու վրայ, դիմանալու համար մեր շրջապատը դիմափոխող տագնապներուն: Դոկտ. Տազեսեան ՀՀՀի ամէնամեայ այս շնորհանդէսները նկատեց հայկական խարխիսներէն մէկը: Ան շնորհաւորեց Հանդէսի պատասխանատու խմբագիր Անդրանիկ Ծ. Վրդ. Կոստանը եւ Հանդէսի ամենաերկարատեւ աշխատակից Դոկտ. Զաւէն Մսըրլեանը Հայաստանի Հանրապետութեան Մովսէս Խորենացի շքանշանով պարգեատրուելուն առթիւ, ինչպէս նաեւ՝ Սփիւռքի Նախարարութեան Մայրենիի Դեսպան Կոչումին արժանացած Հանդէսի խմբագրակազմի անդամ Դոկտ. Արմէն Իրնէշեանը: Իր խօսքի աւարտին, Դոկտ. Տազեսեան անդրադարձաւ նաեւ Համալսարանին մէջ 2012ին եւ 2013ին կազմակերպուած հայ տպագրութեան 500ամեակին

նուիրում 5 ձեռնարկներում, նշելով որ անոնք պարագայականէն անդին գացող հանդիսատրութիւն մը տուին այդ յօրելեանին, ու կարետոր էր որ այդ բոլորը ամփոփուէին մէկ կողքի տակ: Հետեաբար Հայկազեան Համալսարանի հայագիտական ճիգը այսօր կը ներկայանայ երկու հրատարակութեամբ:

Օրուան հիր բանախօսն էր ՀՀ Նորավանք Գիտակրթական Հիմնադրամի փոխտնօրէն Դոկտ. Արթուր Դումանեան: Ան արագ ակնարկ մը նետեց Լիբանանի մէջ գործած հայագիտական կեդրոններուն վրան, կարետրելով ՀՀի հրատարակութեան համար ի գործ դրուող «հերոսական ջանքերը եւ անսահման նուիրումովքները»: Կարետրելով *Հանդէսին* դերը հայագիտութեան մէջ, ան այս հրատարակութիւնը որակեց «հայագիտական դպրոց-դարբնոց», որ դիմակայելով բազմատեսակ դժուարութիւններ, կը շարունակէ իր առաքելութիւնը, ըլլալով «Ափիւքքի հայագիտութեան առաջատար պարբերականներէից մէկը»: Նշելով *Հանդէսի* բաժինները եւ գիտական այլ արժանիքները, Դումանեան հաստատեց, որ տարուէ-տարի կ'աճի անոր հեղինակութիւնը մանաւանդ հայրենաքնակ հայագէտներու շրջանակին մէջ:

Բանախօսութեան երկրորդ մասով Դումանեան անդրադարձաւ Ափիւքքի հայագիտական կեդրոններու հիմնախնդիրներուն, յատկապէս շեշտելով թուրք-ագրպէճմանական կեղծարարութիւններու ոտնձգութիւնները հայագիտութեան նկատմամբ: Ներկայացնելով «թրքական հայագիտութեան» աշխատանքները, բանախօսը անյետաձգելի խնդիր համարեց գործնական ու քաղաքական հայագիտութեան զարգացումը, արժանի հակահարում տալու թուրք-ագրպէճմանական եւ այլ նենգափոխումներուն: Կարետրելով նաեւ հայագիտութիւնը իբրեւ քաղաքակրթական գործօն, ան շեշտեց անոր դերակատարութիւնը հայապահպանութեան եւ ազգային անվտանգութեան հայեցակարգին մէջ, եւ այդ առումով էական նկատեց Հայրենիքի եւ Ափիւքքի փոխ-գործակցութիւնը, շեշտելով Նորավանք Գիտակրթական Հիմնադրամի պատրաստակամութիւնը այդ առնչութեամբ:

Խմբագրական կազմին անունով ելոյթ ունեցաւ Անդրանիկ Ծ. Վրդ. Կռանեան, որ *Հանդէսը* սեպեց հայութեան հայելին, զայն որակելով լուրջ, հաւատարիմ, տոկուն եւ իտէլայապաշտ հրատարակութիւն մը: Վարդապետը շնորհակալութիւն յայտնեց նաեւ ներկաներուն ու ընթերցողներուն, զանոնք նկատելով *Հանդէսին* լոյս ընծայման նպաստող կարետր օժանդակներ:

Փակման խօսքը կատարեց Վեր. Դոկտ. Հայտօսթեան: Ան հայագիտութիւնը նկատեց ուսմունք յանուն լուսատրութեան եւ

հայրություն: Յանուն լուսաորություն՝ ան նշեց Համալսարանին հայագիտական ջանքն ու արդիւնքը, ակադեմական ու գիտական տարբեր միջոցառումներով: Իսկ հայագիտութիւն՝ յանուն հայրութեան առումով, վերապատուելին նշեց թէ հայը պէտք է այնպէս պատրաստուի, որ դառնայ «հայագիտութեան առաջին տէրն ու բանուորը, ադիւժը, մեղուն ու մրջինը», որպէսզի հայագիտութիւնը ծառայէ նաեւ հայերէնի զարգացման, մարդու ինքնագիտակցութեան եւ մանաւանդ կառուցողական միտքի ու հոգիի մշակման: Վեր. Դոկտ. Հայտօսութեան Հայկազեան Հայագիտական Հանդէսը նկատեց Համալսարանին ազգային ինքնութեան ու առաքելութեան բարձրարժէք գրաւական. ան այս եւ բոլոր աշխատանքները նկատեց խորունկ համոզումի արդիւնք, որուն բուն դրամագլուխը, այս պարագային, հայկական ու գիտական հոգին է:

Հանդիսութեան ասարտին, տեղի ունեցաւ ամենական կարկանդակի հատում եւ հիւրասիրութիւն:

ԼԴ. ՀԱՏՈՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Երկուշաբթի, 6 Հոկտեմբեր 2014ին, Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ակադեմիայի Պատմութեան Հիմնարկի Մեսրոպ Արք. Աջճեան սրահին մէջ տեղի ունեցաւ Հայկազեան Հայագիտական Հանդէսի ԼԴ. հատրի շնորհանդէսը, ներկայութեամբ Հայկազեան Համալսարանի Նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսութեանի, հայրենի մտաւորականներու, հայագիտութեան տարբեր գիտակրթական կեդրոններու ներկայացուցիչներու, գիտաշխատողներու, Հանդէսի հին ու նոր աշխատակիցներու:

Շնորհանդէսին բացումը կատարեց Հանդէսի Երեւանի ներկայացուցիչ Դոկտ. Արծուի Բախչինեանը, որ ներկայացնելէ ետք օրուան խորհուրդը հրաւիրեց Հանդէսի պատասխանատու քարտուղար Դոկտ. Տազէսեանը: Վերջինս իր խօսքին մէջ ընդգծեց հայրենի եւ սփիւռքահայ աշխատակիցներու առողջ համախմբումը Հանդէսին շուրջ եւ տիրող համագործակցութեան ոգին, մատնանշելով որ «բոլորս ալ այս ձեւով կը լիցքաւորուինք եւ իրարմով կ'ուժականանանք»:

Ապա խօսք առաւ Հանդէսի երկարամեայ աշխատակից բանասէր Դոկտ. Վարդան Մատթէոսեանը, որ «Հայաստանի եւ արտասահմանի հայ թէ օտար մասնագէտներու բազմալեզու ժամադրաւար,- նկատեց Հանդէսը,- առանց ժամանակի թէ գիտակարգի խտրութեան»: Մատթէոսեան անդրադարձաւ 34րդ հատորին բովանդակութեան,

նկյաթրուն բնոյթին, քննարկուած հարցերուն եւ հաստատեց, թէ «*Հայկազեան Հայագիտական Հանդէսը* յարատեւ ու հետեւողական աշխատանքով կը շարունակէ պահել իր որակը, զուգորդուած խմբագրութեան բծախնդիր մօտեցումին, ամէն մէկ յօդուած վերջնական տեսքի բերելու, զայն անցընելու երկարատեւ գտումի ու մշակումի բովէն, ճոխացնելու եւ բարելաւելու՝ լեզուական խմբագրումով ու բովանդակային փոփոխութիւններով, որոնք այդ անտեսանելի գործին արգասիքն են»։ Մատթէոսեան ափսոսանք յայտնեց որ «*Հանդէսը* հայագիտական մամուլի սակաւաթիւ ներկայացուցիչներէն մէկն է ... Տխուր է հաստատել, որ ան սփիւռքահայ հայագիտական պարբերականներու հայալեզու վերջին մոհիկաններէն մէկն է...»։ Ան տագնապալի նկատեց *Հանդէսին* մէջ տեղ գտած 36 նկյաթրէն միայն հինգին արեւմտահայերէն գրուիլը, հաւաստելով նաեւ որ «այս երեսոյթը խմբագրութեան մնայուն մտահոգութեան առարկան է»։ Այս առթիւ Մատթէոսեան վկայակոչեց հատորին խմբագրականը, ուր բարձրացուած է հայաշխարհը յուզող անկիւնադարձային զարգացումներու շարք մը։ Մատթէոսեան թուեց նաեւ նման կացութեան մը տուն տուող պատճառներ, ապա՝ «ուրախալի» գտաւ որ *Հանդէսի* «էջերէն տեսաբար նոր անուններ կը յայտնուին, որոնց մէկ մասը երիտասարդ ու միջին սերունդին կը պատկանին»։ Հոսկ, ան վկայակոչեց հատորի խմբագրականին՝ հայագիտութեան նոր տրամաբանութեան մեկնաբանութեան մէկ երեսակը՝ «հայագիտական ուսումնասիրութեանց բերքին օգտագործումը ի նպաստ հայ ազգային պետական, ընկերաբանական, քաղաքական միտքի զարգացումին եւ ազգային միասնութեան գաղափարին ամրապնդումին» ու մերժեց «գաղափարական երբեմնի կապանքները ... որոնք յղի են նորատեսակ կապանքներ ստեղծելու վտանգով» եւ եզրափակեց, թէ «գիտութեան յառաջընթացը կարծիքներու բախումէն կը բխի եւ ոչ թէ պարտադրումէն... *Հայկազեան Հայագիտական Հանդէսը* այդպիսի բացախօսութեան բեմ մըն է աշխարհի բոլոր հայագէտներուն համար եւ կը մաղթենք որ անշեղօրէն պահէ այդ սկզբունքը»։

Ապա խօսք առաւ ազգագրագէտ, Դոկտ. Հրանուշ Խառատեանը, որ մատնանշեց *Հանդէսի* «յաջող փորձը»՝ դեռեւ շատ փորձ չունեցողներու եւ փորձառուներու հաւասար ընդգրկումը։ Խառատեան անդրադարձաւ Լիբանանի տագնապալի տարիներուն եւ գնահատեց «անընդմէջ» կանգուն մնալը *Հանդէսին* նշելով որ ան ունի իր դէմքն ու դերը հայագիտութեան մէջ եւ առաջարկեց որ թերեւ արդէն ժամանակն է որ *Հանդէսի* աշխատակցութիւններէն ընտրանի մը առանձինն հրատարակուի օտար լեզուով, ինչպէս նաեւ Սփիւռքի մէջ հրատարակուող օտարալեզու հայագիտական յօդուածներու ընտրանի մը հայերէն հրատարակուի՝ Երեանի մէջ։ Խառատեան կարեւորեց նաեւ

Հանդէսի հրապարակումներու բաժինը եւ եզրափակեց իր խօսքը ընդգծելով անոր յառաջատար դերը նաեւ հայոց լեզուի օգտագործման միջավայրի ու դերի ընդարձակման ու զարգացման մէջ:

Հոսակ, խօսք առաւ Հայկազեան Համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսթեան, որ հանրութեան համառօտակի ներկայացուց Հայկազեան Համալսարանի հայագիտական գործունէութեանց համապատկերը՝ Տէրեան Հայագիտական Գրադարան, *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Հայկական Սփիտքի Ուսումնասիրութեան Կեդրոն, Հայկազեան Հրատարակչական եւ հայագիտական դասանիւթերու դասաւանդում: Վեր. Հայտօսթեան ընդգծեց, որ «*Հանդէսը* մեզի շունչ տուող իրականութիւն է, ան մեր միտքը կը պահէ մեր առաքելութեան մէկ մասը հանդիսացող հայագիտական ոլորտը», եւ շեշտեց որ *Հայկազեան Հայագիտական Հանդէսը* յատուկ ֆոնտ մը չունի եւ թէ՛ «աշխատանքը կը հիմնուի հոգեկան մարդկային դրամազուխին վրայ» ու մաղթեց՝ «Աստուած միշտ մեր մէջ պահէ այդ հոգեկան ու մարդկային դրամազուխը»: Հոսակ, ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր աշխատակիցներուն՝ *Հանդէսին* գեղեցիկ արդիւնքին համար:

Շնորհանդէսի աւարտին ներկաները խօսակցեցան եւ արծարծեցին *Հանդէսի* յառաջիկայ 35րդ հատորին բովանդակութեան, աշխատակցութեան, նիւթերուն ժամկետերու եւ այլեայլ առնչեալ հարցեր:

Հանդէսի ԼԵ. Հատորի Շնորհանդէսը Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի, Թիֆլիսի «Հայարտուն»ի եւ Զաւախքի «Երիտասարդական Կեդրոն»ին Մէջ

Հայկազեան Հայագիտական Հանդէսի ԼԵ. Հատորի առաջին շնորհանդէսը կատարուեցաւ Երեւանի մէջ:

Արդարեւ, Հինգշաբթի, 5 Նոյեմբեր 2015, կէսօրէ ետք ժամը 2ին Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Կլոր Դահլիճին մէջ նախ տեղի ունեցաւ Հայկազեան Համալսարանի հիմնադրութեան 60ամեակի պաշտօնական նիստը, որուն յաջորդեց *Հանդէսի* 35րդ հատորին շնորհանդէսը:

Սփիտքի նախարարուհի Տիկ. Հրանուշ Յակոբեանի, Ակադեմիայի Հայագիտութեան եւ Հասարակական Գիտութիւններու Բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Եւրի Սովարեանի, Երեւանի Պետական Համալսարանի փոխ-րեկտորի, Ամերիկայի Հայ Աւետարանչական

Միության գործադիր նախագահ Զալեն Խանճեանի, Հայկազեան Համալսարանի նախագահ Վեր.-Դոկտ. Փոլ Հայտոսթեանի, *Հանդէսի* պատասխանատու քարտուղար Դոկտ. Տազէսեանի, *Հանդէսի* հայրենի աշխատակիցներու, հայագիտական ուսումնասէրներու, բարեկամներու, հիւրերու, մամուլի եւ հանրային հաղորդակցամիջոցներու ներկայութեան խօսք առաւ ՀՀ Սփիւռքի փոխ նախարար Սերժ Սրապիոնեանը: Պրն. Սրապիոնեան *Հանդէսը* նկատեց «շատ արժէքատու տարեգիրք, ու՝ արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի մերձեցման հող»: Ան նշեց որ դժուար է գերազնահատել *Հանդէսի* ներկայ արժէքը, անլցնելով որ *Հանդէսը* պիտի փնտռուի այնպէս՝ ինչպէս Թեոդիկի *Ամէնուն Տարեցոյցը*:

Ապա ողջոյնի խօսք արտասանեց ՀՀ ԳԱԱ Հրաչեայ Աճառեանի անուան Լեզուի Ինստիտուտի տնօրէն Դոկտ. Վիկտոր Կատուալեանը: Ան ընդգծեց որ Համալսարանի հիմնադրութեան 60ամեակի տօնակատարութիւնը կը կատարուի Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակի տարեշրջանին, որ կը խօսի հայոց վերականգնումի ճիգին մասին ու *Հանդէսի* 35րդ հատորը նկատեց դրսեւորում մը՝ այդ առումով: Կատուալեան անդրադառնալով *Հանդէսի* արժէքին, ի միջի այլոց շեշտեց անոր դերը՝ լեզուի պահպանութեան մէջ:

Երեւանի Պետական Համալսարանի Արեւելագիտութեան Բաժնի տնօրէնի տեղակալ Դոկտ. Ռուբէն Մելքոնեան «Ովասիս» համարեց *Հանդէսը*, շեշտելով անոր գիտական բարձր մակարդակը, որ կը համապատասխանէ միջազգային չափանիշերուն եւ ընդգծեց որ *Հանդէսը* հարթակ է Հայաստանի Հանրապետութիւն-Սփիւռք գիտական գործակցութեան: Դոկտ. Մելքոնեան առանձնացուց *Հանդէսի* 35րդ հատորը իբրեւ «թրքական ժխտողականութեան դէմ Սփիւռքի գիտական ներուժի պատասխան», անլցնելով որ *Հանդէսը* հայագիտական իւրայատուկ մակնիշ մըն է այլեւս:

Հանդէսի Երեւանի ներկայացուցիչ Դոկտ. Արծուի Բախչինեան ծանրացաւ հատորի բովանդակութեան վրայ, նշելով որ 35րդ հատորը ամբողջութեամբ նուիրուած է Հայոց Յեղասպանութեան 100ամեակին եւ թէ անոր 950 էջերը կ'ընդգրկեն հետազօտողներ՝ աշխարհի չորս ծագերէն իրենց բազմազան նիւթերով, ընդգծելով որ հակառակ հատորին մէկ թեմա ունենալուն, ան «հեռու է միագիծ լինելուց»:

ՀՀ ԳԱԱ Գրականութեան Հիմնարկի տնօրէն Դոկտ. Վարդան Դերիկեան ոգետրութեամբ ու խանդավառութեամբ խօսեցաւ *Հանդէսին* առաքելութեն եւ կատարած դերին մասին: Ան բարձր գնահատեց հատորը եւ բարեմաղթեց որ *Հանդէսը* շարունակէ իր վերելքի ընթացքը անընդմէջ:

Հուսկ, խօսք առաւ Հանդէսի տասնամեակներու աշխատակից, նախկին հալէպահայ բանասէր Միհրան Մինասեանը, որ Հանդէսը նկատեց «եզակի երեւոյթ»: Մինասեան ցաւով արձանագրեց սփիւղքահայ հայագիր հայագիտական հանդէսներու վերափոխութիւնը՝ ժամանակատու դարբեցումը ու շեշտեց Հանդէսին իրայատկութիւնները՝ քճախնդրութեան, հետետղականութեան, ընդգրկումի, աշխարհագրական ծիրի թէ բովանդակային առումներով:

Շնորհանդէսի պաշտօնական բաժնի աւարտին ներկաները եւ Հանդէսի աշխատակիցները ծանօթացան Նոր անդամներու, ծաւալեցին խօսակցութիւններ՝ յառաջիկայ հատորին բովանդակութեան, իրենց աշխատակցութեան եւ այլ հարցերով: 35րդ հատորի աշխատակիցներէն իւրաքանչիւրը Հանդէսէն օրինակ մը գրկած, գոհունակ մեկնեցաւ սրահէն, խթանուած՝ հայագիտական իր հետազօտութիւնները առաւել եւս ոգեւորութեամբ շարունակելու:

Շնորհանդէսը նշանակալից էր նաեւ անով որ ներկայ հայագետ-հետազօտողները ականատես եղան հայագետներու բանակին եւ Հայկազեան Հայագիտական Հանդէսին շուրջ տակաւ հիւստող ու ծաւալող հայագիտական ամուր եւ օգտաշատ ցանցին:

Կիրակի, 8 Նոյեմբեր, կ. ետք ժամը 2ին, Թիֆլիսի Հայ Առաքելական Եկեղեցւոյ Վիրահայոց Թեմի «Հայարտուն» կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Հայկազեան Հայագիտական Հանդէսի 35րդ հատորին շնորհանդէսը, ներկայութեամբ շուրջ քառասնեակ մը թիֆլիսահայ մտաւորականներու, արուեստագետներու, Հայարտունի գործիչներու:

Հատորը ներկայացուց Հանդէսի պատասխանատու քարտուղար, Դոկտ. Տազեւեանը: Հակիրճ պատմել է ետք Հայկազեան Համալսարանի մասին, ան անդրադարձաւ Հանդէսին, ու նշեց որ Հանդէսի խմբագրակազմին մտասեւեռում եղած է Թիֆլիսն ու թիֆլիսահայութիւնը եւս ներգրաւել Հանդէսին, ու կոչ ըրաւ որ գործակցաբար կարելի դառնայ այս ծրագիրը: Ապա ան պատասխանեց ներկաներու այլեայլ հարցումներուն, որոնք կը վերաբերէին Լիբանանի հայութեան, պէրոյթահայ դպրոցական, մշակութային կեանքին, ինչպէս նաեւ Սուրիոյ հայութեան վիճակին եւ Հայոց Ցեղասպանութեան նշումներուն՝ Պէրոյթի մէջ:

Ուշագրաւ է որ առաջին անգամ էր որ Հայկազեան Հայագիտական Հանդէսի շնորհանդէս կը կատարուէր Թիֆլիսի եւ ընդհանրապէս Վրաստանի մէջ:

Երկուշաբթի, 9 Նոյեմբեր, կ. ետք ժամը 2ին Զաւախքի «Ախալքալաքի Երիտասարդական Կեդրոն»ին մէջ տեղի ունեցաւ Հայկազեան Հայագիտական Հանդէսի 35րդ հատորի շնորհանդէսը, ներկայութեամբ Կեդրոնի պատասխանատուներուն, ջաւախքահայ

մտաւորականներու, երիտասարդներու, մշակոյթի եւ գրականութեան դէմքերու, ուսուցիչներու:

Հատորը ջաւախքահայութեան ներկայացուց Դոկտ. Տազեսեանը: Իր խօսքին մէջ ան համառօտակի ներկայացուց Հայկազեան Համալսարանն ու անոր առաքելութիւնը, կատարած դերը՝ հայ եւ ոչ-հայ երիտասարդ սերունդներու դաստիարակութեան եւ կրթութեան սատարելու առումով ու ընդգծեց *Հանդէսի* խմբագրակազմին ծգտումը՝ *Հանդէսը* դարձնել համահայկական հայագիտական հարթակ: Ան նշելով որ տարիներ առաջ կարելի եղած էր ընդգրկել Արցախը՝ *Հանդէսին* մէջ, յոյս յայտնեց որ Ջաւախքն ու ջաւախքահայութիւնը կը ներգրաւուին *Հանդէս*, «որպէսզի հայութիւնը իր մտապաստառին վրայ քիչ մը անելի համապարփակ տեսնէ մեր ամբողջութիւնը», եւ կոչ ըրաւ որ *Հանդէսի* 36րդ հատորի մէջ հայագիտական ուսումնասիրութեամբ մը ներկայացուի Ջաւախքը:

Ներկաները՝ տարբեր սերունդներու ջաւախքահայեր, ոգետրուած, հարցումներու շարքով մը դրսետրեցին իրենց հետաքրքրութիւնը եւ ջերմութիւնը Պէյրութի եւ ընդհանրապէս Միջին Արեւելքի հայութեան հանդէպ:

Շնորհանդէսի աւարտին տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն:

Հանդէսի Թիֆլիսի եւ Ջաւախքի շնորհանդէսները կազմակերպուած էին երախտաշատ ջանքերովը Երեւանի Հայկական Ուսումնասիրութիւնների ԱՆԻ Կենտրոնին, զոր կը գլխաւորէ Թաթուլ Յակոբեան:

...ԵՒ՝ ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՋ

Չորեքշաբթի, 9 Դեկտեմբեր 2015, երեկոյեան ժամը 7:00ին Հայկազեան Համալսարանի հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ *Հայկազեան Հայագիտական Հանդէսի* 35րդ հատորի շնորահանդէսը, ներկայութեամբ հայագիտութեամբ եւ մշակոյթով հետաքրքրուող մտաւորականներու, անհատներու, *Հանդէսի* աշխատակիցներու, բարեկամներու եւ Հայկազեան Համալսարանի Նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսեանի: Ձեռնարկը վարեց *Հանդէսի* խմբագրակազմի անդամ Դոկտ. Արմէն Իւրնէշեան, որ ողջունելէ ետք ներկաները, յայտարարեց թէ Համալսարանի 60ամեակի յոբելեանական տարուան մէջ ընթերցողներուն կը յանձնուի *Հանդէսի* 35րդ հատորը: *Հայկազեան Հայագիտական Հանդէսին* առաջին հատորին հրատարակութիւնը եղած է 45 տարի առաջ, իսկ Հայաստանի մէջ կայացած առաջին շնորհանդէսէն անցած է 15 տարի: Դոկտ. Իւրնէշեան ընդգծեց, որ այս

35րդ հատորը ամենն ծալւուն է, եւ նուիրում է հայոց դէմ գործադրուած ցեղասպանութեան 100ամեակին, հաւատալով որ 100ամեակի զանազան հրատարակութիւններուն մէջ յատուկ տեղ պիտի գրաւէ ան:

Ապա հատորը ներկայացնելու համար ամպիոն բարձրացաւ Հայաստանի Հանրապետութեան Սարդարապատի Ազգագրական Թանգարանի գիտաշխատող ազգագրագէտ Պրն. Խորէն Գրիգորեան: Ան ՀՀԳ այս հատորը սեպեց կարետը նախաձեռնութիւն ու ցեղասպանութեան հետազօտման այսօրուան մարտահրաւերներուն եւ հայ իրականութեան իւրօրինակ դրսեւորում: Ան ընդգծեց, որ հատորը արժանի է կոչուելու նոր էջ՝ ցեղասպանագիտութեան մէջ: Գրիգորեան կարեւորեց այն որ հատորին յօդուածագիրները եղած են թէ՛ Սփիւռքէն եւ թէ՛ Հայաստանէն, որով ալ կը դրսեւորուին տարբեր վայրեր բնակող հայ մտատրականներու մօտեցումներն ու հայեցակէտերը՝ Հայոց Ցեղասպանութեան հանդէպ: Ան հաւաստեց որ, հատորին յօդուածները դուրս եկած են «Բացառիկ դրուագներ» նկարագրելու միտումէն, եւ փորձ կատարուած է վերլուծական յօդուածներու միջոցով ներկայացնելու ցեղասպանութիւնը իր հետեանքներով: Իր խօսքը աւարտելով, Գրիգորեան նշեց որ հատորը իր նպաստը պիտի ունենայ Հայոց Ցեղասպանութեան ուսումնասիրութեան յառաջիկայ ուղիներու զարգացման:

Խօսք առնելով, Դոկտ. Տազեսեան նշեց որ Հանդէսը ՀՀի մէջ իր ներկայացուցիչը ունեցաւ 2001էն սկսեալ, յանձին Դոկտ. Արծուի Բախշեանի: Այս նշանակումին յաջորդեցին գրեթէ ամենամեայ շնորհանդէսները Երեւանի, Գիւմրիի, Արցախի մէջ, իսկ այս տարի նաեւ Թիֆլիսի ու Ջաւախքի մէջ: Ապա ան նկարներով ներկայացուց *Հանդէսի* 35րդ հատորի ձեռնարկները Երեւանի, Թիֆլիսի եւ Ջաւախքի մէջ:

Հանդիսութեան աւարտին, իր խօսքը ունեցաւ Հայկազեան Համալսարանի նախագահ Վեր.-Դոկտ. Փօլ Հայտօսեան: Ան շնորհաւորեց հայագիտութեան այս նոր բերքը, շնորհակալութիւն յայտնեց պատասխանատու խմբակին՝ Հայր Անդրանիկ Ծ. Վրդ. Կռանեանին, Դոկտ. Արտա Էքմէքճիին, Դոկտ. Արշալոյս Թօփալեանին, Դոկտ. Արմէն Իլոնէշեանին եւ Դոկտ. Անդանիկ Տազեսեանին: Վեր. Հայտօսեան նշեց, որ հատորը համեստ թիւով սակայն հսկայ նուիրումով պատրաստուած հատոր է եւ հաւաստեց՝ «հատորին բոլոր էջերը մեզ կը մղեն գնահատելու մեր *Հանդէսի* այս թիւը ցեղասպանութեան 100ամեակի նշումի տարուան մէջ: Յատուկ գնահատելի կէտերէն մէկը այն է, որ սփիւռքը չունի հայատառ կարետը հանդէսներ: Յիշելու եւ պահանջելու ականյայտ միտքէն անդին այս հատորը կ'աւելցնէ շարունակաբար պրպտելու, քննելու, վերլուծելու,

բաղդատելու մեր պատասխանատուութիւնը այսօր: Այս աշխատանքը պէտք է շարունակուի եւ Հայագիտական Հանդէսի այս հատորի նիւթերը նոր էջեր պիտի բանան եւ կրնան մէկէ անելի գիտաժողովի սերտողութեան նիւթ դառնալ»: Իր խօսքի աւարտին, Հայկազեան Համալսարանի նախագահը շեշտեց ու մաղթեց որ անելի մեծ թափով ու սլացքով ուղղուինք դէպի ապագան:

Հուսկ, ներկաները ելան Համալսարանին բակը, ուր հատորի յօդաձագիրները, եւ խմբագրակազմը միասնաբար հատեցին աւանդական կարկանդակը: